

ԽԱԿԱՐԱ - ՔԱՐ

(Պատմուածք)

Պատմութիւնը երկար էր, պապս նստեց, թռւթունը հանեց գրպանից, հոռա քաշեց, մի պինդ փոշտաց, հաստ թելով կապեց կաշուէ յատուկ դրա համար պատրաստուած տոպղակը, գրպանը դրեց, ձեռքով մի պինդ էլ բեխերը սրբեց՝ և սկսեց...

Ներքն աւազոտ ձորն էր, անդնդախոր և լայն, իսկ առջևիս եւ գիւղի տափարակ դիւղը երևում էր Արաքսը, երևում էր «Փոշտու ու թափանց, իսկ մի փոքր այն կողմ պատմական, «Խանի-բաղը» աւերումների մի շամբուտ... Որուս-Պատմական, սահմանագլխին ենք, ձախ կողմը լեռներ են, սթին քարանձաւներ, բարձր քարաժայուեր... ձորեր ու ձորեր... Այդտեղից երևում են գիւղի սրտին այնքան մօտ նույիրական անուններ, «Երկտա-խաչ, Շիգեռիճ, Կարմիր քարի օսը, Ուչ-Ղարդաշ», իսկ մի փոքր այն կողմ հորիզոնական ուղղութեամբ մի մեծ սրբատեղի, ռնխօդի Ս. Յովհաննէսը: Տեսարանը յուղիչ է մանաւանդ երբ ձախ կողմի՝ «Մուծ-փոսի» ցակուտներից լսւում է տաւարի անվերջ բառաշը...

— Տեսնում ես այս սարը, հարցրեց պապս:

— Տեսնում եմ — պատասխանեցի, — Խակարա-քարը չէ,

— Այո, հէնց նա է, պատասխանեց նա գլուխը օրորելով:

— Եղել ես այնտեղ մի որևէ է ժամանակ, պտտել ես այն մաղարաները, կրկին անգամ հարց տուեց նա:

— Եղել եմ, բայց մաղարաները չեմ մտել, այնտեղ ջանաւարների բունն է, ասում են...

Պապս քմծիծաղ տուեց, մի փոքր էլ ծիծաղեց, հաղաց էլ, գեղնապրյն թուքը թքեց գետին՝ և ասաց.

— Այն մաղարաներից մէկը մեր զինարանն էր, իսկ միւսը վառողի պահեստը...

— Ի՞նչպէս, հետաքրքրուեցի:

— Այնպէս, կուղես լսել:

— Ուրախութեամբ՝ ասացի, և նա սկսեց.

— Նզըրաշի ժամանակն էր՝ մի սև տարի, ամենայն օր զզըրաշի զօրքերը գալիս էին ծհծելով, սպանելով, հաւաքում մեղ թօրունով բիրադի, կին, երեխայ, աղջիկ, տղայ, տանում Արագի էն կողմը, պահում չօլերի մէջ. թէ էդտեղ ապրեցէք թէ չէ Ռափ զօրքը կը գայ և ձեզ բոլորիդ կկոտորի... Սև տարի էր, երկու սրի մէջ տեղ էինք մնացել, ուրիշ ի՞նչ անէինք, թանդութիւնն էլ մի կողմից եկաւ, պակաս թողածն էլ դա դիզացրեց... Աշխատող ձեռք չկար, եղած-չեղածը զօրքերը թաւանում էին, իսկ մենք էլ սարերում հազիւ մեր գլխի համար էինք մտածում... Է՞հ, ժամանակը փիս էր բալայ, մենք տեսանք... զուք չտեսնէք...

Պապս մի խոր թառաչ քաշեց, մորթէ փափաղով ճակատի քրտինքը սրբեց; աչքերը բարձրացրեց՝ մէկ էլ նայեց բնական այդ մեծ բերդին, գլուխը օրօրեց. — Էյ գիտի անցած օրեր... ասաց՝ և սկսեց.

— Շաբաթներով սոված ենք մնացել... ամիսներով մօր ու քիւլիաթի երես չենք տեսել, բայց դարձեալ ապրել ենք... իսանի երեսը պինդ է, օղուլ, նա շանկց էլ բէթար է, նեղ օրին դիմացանք... ամա լէն օրին չէ...

— Պապի, պատմութեանդ թիւլը չմոռանաս:

— Զեմ մոռանայ, զաւակս, չելակս բռնիր՝ խոաը վեր գնեմ յոդնեցայ, յետոյ կպատմեմ.

Ես օգնեցի, նա համարեա թէ ընկաւ, մի երկար «ուխխմայ» արեց: — Դինջութիւնը լաւ է, բալաս, ամա ինսանին մվլ է դինջութիւն տուել. էշի պէս օրը մինչև երեկոյ հողի մէջ թաւէլ ենք տալիս, մի կտոր ցամաք հացի համար... Էն էլ որ թողնեն հալալ ուտենք, Էդ էլ մի բան է... էսօրուան էգուց իմբուր չունինք, ծղուլ, — շարունակեց նա — էս ձեռքը՝ էն ձեռքին մօհթաջ շընկնի թէ չէ, բանդ պրծած ա, ապա մին միրուքիս նայիր, ինչի՞ր եմ տեսել, գիտեմս...

Նա ձեռքով բռնեց միրուքը, թութունը հանեց նորից, երկու մատով թափ տուեց, ընը — ընը արաց քաշեց, դրեց գըրպանում.

— Պապի, պատմութիւնդ:

— Հա, դէ նստիր կպատմեմ, բալաս, էնքան էին կոտորում — սկսեց նա — արինը գետ էր դառել... մէկը որդին չունէր, միւսը աղջիկը. մի ուրիշն էլ հայրն ու մայրը... Արագը արիւն կտրեց, լցուեց խեղդուածներով, իսկ մնացած եսիրները նըրանց վրայով անց կացան, ղղըլլաշի զօրքը ուրիշ է, բալմայ,

գուլումը մահը չէր... փատիկներին ձիանց ոտի տակ էին տալիս, իսկ իմ մայրս, որ երեք օրուայ ծննդական էր, փորը ճըղեցին, երեխին նորից պառկեցրին այստեղ՝ և Արազը ձգեցին... Արազն էլ մեր գուշմանն էր, ծղուլ, նա էլ մի կողմից էր կուլ տալիս մեղ...

Պապս կանգ առաւ, չուխի փառակով աչքերը սրբեց, մի պարզ հայեացքով ոտից գլուխ չափեց ինձ. և ապա շարունակեց.

—Մօրից եթիւ մնալը ուրիշ բան է, բալաս, նրան ոչ ոք չի հասնի, մայրը թանգ բան է... ամա չէ, մօրից թանկ ուրիշ բան էլ կար... աշխարհքին հալա չես ճանաչում, ծղուլ, որ մեծանաս՝ ամեն բան կրմանաս... Մելիք-Սարգսի աղջկը գլուխն... մեր սարերի կաքաւն էր ասես... Տոտիկ-տոտիկ էն-պէս ման կզարք... էնպէս ծառու կանէր որ ասես հէսա դուշ դառաւ... թառլան էր բալայ, էն դիւնից եկած մին թևաւոր հրեշտակ էր կասես, իմ առաջին սէրն էր, նրան էլ տարին անհաւատաները... էս մէկը հօրս ուղածն է, իմ ուղածը Շամամն էր, ամա շուր գնաց... Մի անգամ որ «բէնջարի» էինք գնացել, ցօրտ—ախառուրի մօտ ինչնէր խօսացինք, գիտեմ... է՞ն, անցածը թէն փիս է, բայց էրնէկ նրան, բալայ, անցածին օր չի հասնի...

Նա նայեց ինձ, ինչ անելս չիմացայ. զառամեալ պապս իմ առաջ երեխայ էր կտրել, նա պատմում էր ամեն ինչ առանց իմանալու թէ ես նրա թոռան-թոռն եմ, մի փոքրիկ մասուկ. բայց նա չթողեց ինքս ինձ հաշիւ տալ ու շարունակեց.

—Վերջին օրն էր, գիւղի ջահիլներս հաւաքուել էինք Խակարա-քարի մէջ, այդտեղ էր հայրս, Մելիք-Սարգիսը, Մելիք-Յովհաննէսը, Աղաւելու հէրը, Աւշի Փարսադանը, Հղուլ Համբարցումա հէրը, և գիւղի մնացած իշխանները: Լուսաբաց էր, Ռսի զօրքը էնպէս եկաւ քաշուանի միջով անցկացաւ որ, թառ պահողները ոչինչ չիմացան, համա որ լուսացաւ, Շահի զօրքը եկաւ... Դիւղը դիփ լցուեց, մի ճօնդն էլ խանի-բաղումն էր, ասենք էն ժամանակ էնպէս կարգ ու կանոն չկար, Ղըլլաշի Սարւաղը անկարգ էր, գէ համա ինչ անես որ Ռսի զօրքը յետ գնաց, բաններս փիս էր, ինչ անէինը որոշեցինք դէմ գնել. միակ ճանապարհը սա էր որով պիտի անցնէին— նա ցոյց տուեց ձորը—մին էլ յանկարծ էդ Աստծու ձեռքով շինուած բերդից որոտացին հրացանները... մի ամբողջ ամսուայ պաշար ունէինք, վախելու ոչինչ չկար և կուռմ էինք...

Շահի զօրքերը յետ դարձան, էդ էր որ գնացին էլ ետ

չդարձան... Ամա մեր ջահիլներից էլ շատ յարդ ընկաւ. Էդ բոլորը պարտական ենք էս սարին, տեմնում ես, եթէ դա վիճէր, մեր գիւղը էսօր չեր լինի... Աստուած ցան էլ ա տալիս, գեղն էլ... տղայ ես օգտուիր... որ տեսայ ջահիլութիւնս միտս ընկաւ... ջահիլութիւնը լաւ է, օղուլ, գիտ ջահիլ էի, ամա շուտ պառաւեցի... Էհ էրնէկ անցածին...

Նա լոեց: Իսկ խրոխտ Խակարա-քարը իւր լերկ ապառաժներով շարունակում էր մնալ իւր տեղում. մի քանի անգամ շուր եկայ, կարծես յարգանքով նայեցի նորա բարձրութեան, և թագնուեցայ նրա ստորոտում... պապս շալակեց խուրձ խոտը, մենք ճանապարհ ընկանք...

Ա. ԶԱՆԵԱՆ

Բագու